ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/255

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Արխի լաբ» ՍՊԸ-ի տնօրեն Ս.Գալստայնի (պետական ռեգիստրի վկայական թիվ 271.110.1071720),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.12.2020թ. թիվ 26/26-1/18230-2020 գրությամբ «Արխի լաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կադաստրի կոմիտեի 07.12.2020թ. թիվ ԱԹ/7055-2020 գրության հիման վրա 08.12.2020թ. թիվ 26/26-1/18230-2020 գրությամբ նախաձեռնել է «Արխի լաբ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Արխի լաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Արխի լաբ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/255 ընթացակարգի շրջանակներում 15.12.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով հայտնել է, որ աշխատանքների մեծ մասը կատարվել են, սակայն սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված՝ Ընկերությունը զրկված է եղել Պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտին հասցնելու հնարավորությունից, մասնավորապես՝ անօդաչու թռչող սարքի թռիչքների հետ կապված աշխատանքներով պայմանավորված, ինչն էլ պատճառ է հանդիսացել պայմանագրի լուծման համար:

3. <u>ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կադաստրի կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.12.2020թ. թիվ ԱԹ/7055-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Կադաստրի կոմիտեի և «Արխի լաբ» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի օգոստոսի 14-ին կնքված ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պետական գնման N ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 պայմանագրով ստանձնած պարտավորությունները վերոնշյալ ընկերության կողմից պատշաճ ձևով չեն կատարվել, և էականորեն խախտվել է Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետի պահանջներով՝ տեղեկացնում ենք, որ Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/255 ընթացակարգի շրջանակներում 15.12.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/255 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/255 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կադաստրի կոմիտեի և «Արխի լաբ» ՍՊԸ-ի միջև 14.08.2020թ. կնքվել է թիվ «ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01» ծածկագրով պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2.Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71351250/501		դրամ	8900000	1		ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 07.09.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որի 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով

ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Պատվիրատուն «Արխի լաբ» ՍՊԸ-ին ուղղված 12.10.2020թ. թիվ ԴՍ/6185-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«2020թ. օգոստոսի 14-ին կնքված N «ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01» ծածկագրով «Սևան ազգային պարկ»-ի ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների և Սևանի ամբողջ ափամերձ հատվածի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման ծառայությունների մատուցման պայմանագրով Ձեր կողմից պետք է իրականացվեն դաշտային չափագրման ծառայություններ, որոնց իրականացման ժամանակ ուսումնասիրման նպատակով պետք է մասնակից լիներ նաև կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցը: Քանի որ հեռախոսազանգով մի քանի անգամ Ձեզ հայտնվել է աշխատանքների մեկնարկելուն պես տեղեկացնել Կադաստրի կոմիտեին, որի մասին որևէ արձագանք չի ստացվել: Ելնելով վերոգրյալից խնդրում ենք տրամադրել Ձեր կողմից իրականացվող և իրականացված աշխատանքների ժամանակացույցը, ինչպես նաև տեղեկատվություն կատարված աշխատանքների և հետայսու իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք, ներկայացնել տեղեկատվություն «Արխի Լաբ» ՍՊԸ-ում աշխատող և գեոդեզիական աշխատանքների իրականացնող որակավորված անձի մասին»:

5. Ի պատասխան վերը շարադրված գրության՝ «Արխի լաբ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 12.10.2020թ. N ԴՍ/6185-20 նամակի Ձեզ ենք ներկայացնում «Սևան» ԱՆ ազգային պարկի» 10 կմ երկարությամբ ճեմուղու տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների հետևյալ կետերը էլեկտրոնային տարբերակով՝

- Արբանյակային գեոդեզիական Խտացման ցանցի կետերի տեղադրում
- Արբանյակային գեոդեզիական ցանցի կոորդինատների որոշում (Ռովեր)
- Կետերի ամպիֆոտոգրամետրիկ նախագծի ստեղծում
- 1:2000 մասշտաբի Սևան Ազգային պարկի ճեմուղու հանութագրում

Տեղեկացնում ենք Ձեզ 18.10.2020թ.-ին կատարավել են տեղանքի դաշտային աշխատանքներ, որին մասնակցել է Գեոմատիկայի կենտրոնի դաշտային աշխատանքների կազմակերպման և համակարգման գլխավոր մասնագետ՝ Ղարիբյան

Վարդանը, ում հետ որ պայմանավորվածություն է ձեռք բերվել անօդաչու թռչող սարքի թռիչքներին մասնակցելու մասին:

Ստորև ներկայացնում ենք կատարված և կատարվելիք աշխատանքների ժամանակացույցը՝

Հ/Հ	անվանումը	Վերջնաժամկետ
1	Տեխնիկական նախագծի կազմում	19.10.2020թ.
2	Աերոնկարահանում (անօդաչու թռչող սարքերով)	19.10-19.11.2020թ.
3	Արբանյակային գեոդեզիական Խտացման ցանցի կետերի տեղադրում	19.10.2020թ.
4	Արբանյակային գեոդեզիականցան ցիկոորդինատների որոշում (Ռովեր)	19.10.2020թ.
5	Կետերի ամպիֆոտոգրամետրիկ նախագծի ստեղծում	19.10.2020թ.
6	Օդալուսանկարահանման նյութերի գրասենյակային վերծանում	19.10-19.11.2020թ.
7	Օդալուսանկարահանման նյութերի դաշտային վերծանում	19.10-19.11.2020թ.
8	1:2000 մասշտաբի Սևան Ազգային պարկի ճեմուղու հանութագրում	19.10.2020թ.
9	1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծում /թվայնացում/ օրթոֆոտոհատակագծերի հիման վրա	19.10-19.11.2020թ.
10	Տեխնիկական հաշվետվության կազմում	19.10-19.11.2020թ.

Նաև հայտնում եմ Ձեզ այն մասին, որ կախված երկրում տիրող իրավիճակից, որը սերտորեն կապված է կատարվելիք աշխատանքների հետ, մեր կողմից ներկայացված վերջնաժամկետը կարող է փոփոխվել (անօդաչու սարքի թռիչքների թուլտվության հետ կապված):

Ներկայացնում եմ նաև «Արխի Լաբ» ՍՊԸ-ում աշխատող և գեոդեզիական աշխատանքների իրականացնող որակավորված անձանց տվյալները՝ Ռազմիկ Ամիրի Նազարյան (վկայական N0140 տրվ.՝ 29.05.12թ), Սերինե Գեղամի Ստեփանյան (վկայական N 0394 տրվ.՝ 04.05.2020թ): Աշխատանքերում կիրառված տեխնիկական միջոցների անվանումները և մոդելները, և SAGA Pro dron by GDU-Tech Co. մոդելի անօդաչու թռչող սարքը»:

6. «Արխի լաբ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 24.11.2020թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«1. Կադաստրի կոմիտեի, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, և «Արխի Լաբ» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Ս. Գալստյանի, միջև 2020 թվականի օգոստոսի14-ին կնքվել է N ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 «Պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը»:

2. Պայմանագրի 6-րդ մասի համաձայն՝ մեր կազմակերպությունն իրավասու է լուծել վերոնշյալ Պայմանագիրը՝ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ծագած իրավիճակի հիմքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Պայմանագրի համաձայն՝ այդպիսի իրավիճակների շարքում են՝ պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Մասնավորապես, հայտնում ենք, որ՝

ա) ՀՀ Կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ողջ տարածքում հայտարարվել է ռազմական դրություն, որը շարունակվում է մինչ օրս՝ 23.11.2020թ.:

բ) Վերոնշյալ որոշման Հավելվածի 1-ին գլխի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվում է ընդհանուր զորահավաք, ինչպես նաև Հայտարարվում է պահեստազորի սպայական, ենթասպայական և շարքային կազմի մինչև 55 տարեկան պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչ, որին ներգրավվել են մեր Կազմակերպության աշխատակիցները, որի հետևանքով կասեցվել են Պայմանագրով նախատեսված մի շարք աշխատանքների կատարումը:

գ) Վերոնշյալ որոշման, ինչպես նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ կիրառվող իրավունքների ու ազատությունների ժամանակավոր մի շարք սահմանափակումներին զուգահեռ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից 2020 թվականի հոկտեմբերի 3-ին հրապարակված զգուշացման համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը բոլոր անհատ քաղաքացիներին և կազմակերպություններին խստորեն զգուշացնում է, որ այս օրերին անհրաժեշտ է լիովին բացառել ցանկացած տիպի ու չափերի անօդաչու թռչող սարքերի

օդային կիրառումը, որը կարող է տագնապային տպավորություն թողնել հանրության շրջանում:

Միաժամանակ, հորդորում ենք մեր ազգաբնակչությանը՝ անօդաչու թռչող սարքեր օգտագործող անձանց և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում անհապաղ դիմել իրավապահ մարմիններին», որի հետևանքով կասեցվել են Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման համար զգալի նշանակություն ունեցող անօդաչու սարքերի կիրառումը:

դ) Միաժամանակ, հայտնում ենք, որ պայմանավորված աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ վարակ) տարածման դեպքերի և այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքով՝ մեր Կազմակերպությունում ևս գրանցվել են կորոնավիրուսային հիվանդությամբ վարակի մի շարք դեպքեր, որոնք անհնարին են դարձրել մեր Կազմակերպության աշխատակիցների կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը:

3. Ամբողջացնելով վերը թվարկված իրավական և փաստական հանգամանքների համակցությունը՝ սույնով հայտնում ենք, որ 2020 թվականի օգոստոսի 14-ին կնքված N ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 «Պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պետական գնման ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի և Պայմանագրի 6-րդ մասի հիման վրա համարվում է լուծված՝ սույն ծանուցումը Ձեր Կազմակերպությունում ստանալու պահից»:

7. «Արխի լաբ» ՍՊԸ-ին ուղղված 01.12.2020թ. թիվ ԱԹ/6997-2020 ծանուցմամբ ՀՀ կադաստրի կոմիտեն հայտնել է հետևյալը.

««Արխիլաբ» ՍՊԸ-ի և Կադաստրի կոմիտեի միջև 14.08.2020թ. կնքված՝ «Պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման» պետական գնման թիվ ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 պայմանագրով ստանձնած պարտավորությունները Ձեր ընկերության կողմից պատշաճ կերպով չեն կատարվել և էականորեն խախտվել են, և ղեկավարվելով պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթներով լուծում ենք հիշյալ պայմանագիրը»:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 02.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.12.2020թ. թիվ 26/26/18230-2020 գրությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 07.12.2020թ. թիվ ԱԹ/7055-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես. ՀՀ կադաստրի կոմիտեի և «Արխի լաբ» ՍՊԸ-ի միջև 14.08.2020թ. կնքվել է թիվ «ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01» ծածկագրով պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը

1	71351250/501		դրամ	8900000	1		ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող ***համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.***

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև ***07.09.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը,*** որի 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Պատվիրատուն «Արխի Լաբ» ՍՊԸ-ին ուղղված 12.10.2020թ. թիվ ԴՍ/6185-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«2020թ. օգոստոսի 14-ին կնքված N ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 ծածկագրով «Սևան ազգային պարկ»-ի ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների և Սևանի ամբողջ ափամերձ հատվածի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման ծառայությունների մատուցման պայմանագրով Ձեր կողմից պետք է իրականացվեն դաշտային չափագրման ծառայություններ, որոնց իրականացման ժամանակ ուսումնասիրման նպատակով պետք է մասնակից լիներ նաև կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցը: Քանի որ հեռախոսազանգով մի քանի անգամ Ձեզ հայտնվել է աշխատանքների մեկնարկելուն պես տեղեկացնել Կադաստրի կոմիտեին, որի մասին որևէ արձագանք չի ստացվել: Ելնելով վերոգրյալից խնդրում ենք տրամադրել Ձեր կողմից իրականացվող և իրականացված աշխատանքների ժամանակացույցը, ինչպես նաև տեղեկատվություն կատարված աշխատանքների և հետայսու իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք, ներկայացնել տեղեկատվություն «Արխի Լաբ» ՍՊԸ-ում աշխատող և գեոդեզիական աշխատանքների իրականացնող որակավորված անձի մասին»:

Ի պատասխան վերը շարադրված գրության՝ «Արխի լաբ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 12.10.2020թ. N ԴՍ/6185-20 նամակի Ձեզ ենք ներկայացնում «Սևան» ԱՆ ազգային պարկի» 10 կմ երկարությամբ ճեմուղու տարածքի 1:2000 մասշտաբի

տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների հետևյալ կետերը էլեկտրոնային տարբերակով՝

- Արբանյակային գեոդեզիական Խտացման ցանցի կետերի տեղադրում
- Արբանյակային գեոդեզիական ցանցի կոորդինատների որոշում (Ռովեր)
- Կետերի ամպիֆոտոգրամետրիկ նախագծի ստեղծում
- 1:2000 մասշտաբի Սևան Ազգային պարկի ճեմուղու հանութագրում

Տեղեկացնում ենք Ձեզ 18.10.2020թ.-ին կատարավել են տեղանքի դաշտային աշխատանքներ, որին մասնակցել է Գեոմատիկայի կենտրոնի դաշտային աշխատանքների կազմակերպման և համակարգման գլխավոր մասնագետ՝ Ղարիբյան Վարդանը, ում հետ որ պայմանավորվածություն է ձեռք բերվել անօդաչու թռչող սարքի թռիչքներին մասնակցելու մասին:

Ստորև ներկայացնում ենք կատարված և կատարվելիք աշխատանքների ժամանակացույցը՝

Հ/Հ	անվանումը	Վերջնաժամկետ
1	Տեխնիկական նախագծի կազմում	19.10.2020թ.
2	Աերոնկարահանում (անօդաչու թռչող սարքերով)	19.10-19.11.2020թ.
3	Արբանյակային գեոդեզիական Խտացման ցանցի կետերի տեղադրում	19.10.2020թ.
4	Արբանյակային գեոդեզիականցան ցիկոորդինատների որոշում (Ռովեր)	19.10.2020թ.
5	Կետերի ամպիֆոտոգրամետրիկ նախագծի ստեղծում	19.10.2020թ.
6	Օդալուսանկարահանման նյութերի գրասենյակային վերծանում	19.10-19.11.2020թ.
7	Օդալուսանկարահանման նյութերի դաշտային վերծանում	19.10-19.11.2020թ.
8	1:2000 մասշտաբի Սևան Ազգային պարկի ճեմուղու հանութագրում	19.10.2020թ.
9	1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծում /թվայնացում/ օրթոֆոտոհատակագծերի հիման վրա	19.10-19.11.2020թ.
10	Տեխնիկական հաշվետվության կազմում	19.10-19.11.2020թ.

Նաև հայտնում եմ Ձեզ այն մասին, որ կախված երկրում տիրող իրավիճակից, որը սերտորեն կապված է կատարվելիք աշխատանքների հետ, մեր կողմից ներկայացված

վերջնաժամկետը կարող է փոփոխվել (անօդաչու սարքի թռիչքների թուլտվության հետ կապված):

Ներկայացնում եմ նաև «Արխի Լաբ» ՍՊԸ-ում աշխատող և գեոդեզիական աշխատանքների իրականացնող որակավորված անձանց տվյալները՝ Ռազմիկ Ամիրի Նազարյան (վկայական N0140 տրվ.՝ 29.05.12թ), Սերինե Գեղամի Ստեփանյան (վկայական N 0394 տրվ.՝ 04.05.2020թ): Աշխատանքերում կիրառված տեխնիկական միջոցների անվանումները և մոդելները, և SAGA Pro dron by GDU-Tech Co. մոդելի անօդաչու թռչող սարքը»:

«Արխի լաբ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 24.11.2020թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«1. Կադաստրի կոմիտեի, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, և «Արխի Լաբ» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Ս. Գալստյանի, միջև 2020թվականի օգոստոսի14-ին կնքվել է N ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 «Պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը» (այսուհետ՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 6-րդ մասի համաձայն՝ մեր կազմակերպությունն իրավասու է լուծել վերոնշյալ Պայմանագիրը՝ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ծագած իրավիճակի հիմքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Պայմանագրի համաձայն՝ այդպիսի իրավիճակների շարքում են՝ պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Մասնավորապես, հայտնում ենք, որ՝

ա) ***<u>ՀՀ Կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ողջ տարածքում հայտարարվել է ռազմական դրություն, որը շարունակվում է մինչ օրս՝ 23.11.2020թ</u>***.:

բ) Վերոնշյալ որոշման Հավելվածի 1-ին գլխի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվում է ընդհանուր զորահավաք, ինչպես նաև Հայտարարվում է պահեստազորի սպայական, ենթասպայական և շարքային կազմի մինչև 55 տարեկան պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչ,

որին ներգրավվել են մեր Կազմակերպության աշխատակիցները, որի հետևանքով կասեցվել են Պայմանագրով նախատեսված մի շարք աշխատանքների կատարումը:

գ) Վերոնշյալ որոշման, ինչպես նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ կիրառվող իրավունքների ու ազատությունների ժամանակավոր մի շարք սահմանափակումներին զուգահեռ ***ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից 2020 թվականի հոկտեմբերի 3-ին հրապարակված զգուշացման համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը բոլոր անհատ քաղաքացիներին և կազմակերպություններին խստորեն զգուշացնում է, որ այս օրերին անհրաժեշտ է լիովին բացառել ցանկացած տիպի ու չափերի անօդաչու թռչող սարքերի օդային կիրառումը, որը կարող է տագնապային տպավորություն թողնել հանրության շրջանում***:

Միաժամանակ, հորդորում ենք մեր ազգաբնակչությանը՝ անօդաչու թռչող սարքեր օգտագործող անձանց և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում անհապաղ դիմել իրավապահ մարմիններին», որի հետևանքով կասեցվել են Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման համար զգալի նշանակություն ունեցող անօդաչու սարքերի կիրառումը:

դ) Միաժամանակ, հայտնում ենք, որ պայմանավորված աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ վարակ) տարածման դեպքերի և այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքով՝ մեր Կազմակերպությունում ևս գրանցվել են կորոնավիրուսային հիվանդությամբ վարակի մի շարք դեպքեր, որոնք անհնարին են դարձրել մեր Կազմակերպության աշխատակիցների կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը:

3. Ամբողջացնելով վերը թվարկված իրավական և փաստական հանգամանքների համակցությունը՝ սույնով հայտնում ենք, որ 2020 թվականի օգոստոսի14-ին կնքված N ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 «Պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման պետական գնման ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի և

Պայմանագրի 6-րդ մասի հիման վրա համարվում է լուծված՝ սույն ծանուցումը Ձեր Կազմակերպությունում ստանալու պահից»:

«Արխի լաբ» ՍՊԸ-ին ուղղված 01.12.2020թ. թիվ ԱԹ/6997-2020 ծանուցմամբ ՀՀ կադաստրի կոմիտեն հայտնել է հետևյալը.

««Արխիլաբ» ՍՊԸ-ի և Կադաստրի կոմիտեի միջև 14.08.2020թ. կնքված՝ «Պետության կարիքների համար «Սևան ազգային պարկի» ուղեգծային և 10 կմ երկարության ճեմուղու տարածքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման ծառայությունների մատուցման» պետական գնման թիվ ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01 պայմանագրով ստանձնած պարտավորությունները Ձեր ընկերության կողմից պատշաճ կերպով չեն կատարվել և էականորեն խախտվել են, ***<u>և ղեկավարվելով պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթներով լուծում ենք հիշյալ պայմանագիրը</u>***»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 02.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,</u>*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Պայմանագրի 2.1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 6-րդ կետի համաձայն՝ ***<u>սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության</u>***

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ***ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը***, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

ՀՀ Կառավարության 27.09.2020թ. N 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվել է ռազմական դրություն:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Պատվիրատուի կողմից Պայմանագրի ***2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթներով, այն է՝ ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը***, պայմանագիրը լուծելուն հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական

եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***<u>Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը</u>***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***<u>գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն</u>***.

3) ***<u>եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝</u>***

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

<u>բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:</u>

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ,*** այնուհետև Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը, ***որից հետո պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչը տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն և եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը առկա չեն, ինչն արդեն հերքում է «Արխի Լաբ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետի խախտման***

փաստը, <u>այսինքն՝ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից նշված հիմքով 14.08.2020թ. կնքված «ԿԿ-ՀԲՄԾՁԲ-20/01» ծածկագրով պետական գնման պայմանագիրը լուծելն իրավաչափ չէ:</u>

Ինչ վերաբերում է Պայմանագիրը 2.1.3 կետի բ) ենթակետով, այն է՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը, լուծելուն.

Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ***<u>մինչև 25.12.2020թ</u>***., մինչդեռ՝ Պատվիրատուն ***<u>Պայմանագիրը լուծել է 02.12.2020թ.՝ սահմանված վերջնաժամկետը լրացած չլինելու պայմաններում,</u>*** այսինքն՝ ***հերքվում է նաև «Արխի Լաբ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի խախտման փաստը, ուստի հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է՝ Ընկերությանը վերագրելով Պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացող այնպիսի խախտումներ, որոնք սույն գործի շրջանակներում առկա չեն, թեև Ընկերությունը թե՛ 19.10.2020թ. գրությամբ, այն է՝*** «...կախված երկրում տիրող իրավիճակից, որը սերտորեն կապված է կատարվելիք աշխատանքների հետ, իր կողմից ներկայացված վերջնաժամկետը կարող է փոփոխվել (անօդաչու սարքի թռիչքների թուլտվության հետ կապված)», թե՛ 24.11.2020թ. պայմանագիրը լուծելու մասին ծանուցմամբ (ամբողջությամբ շարադրված է որոշման մեջ) հայտնել է ***<u>ՀՀ Կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշման հետևանքով ծառայությունների մատուցման՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացումը ավարտին հասցնելու անհնարինության վերաբերյալ:</u>***

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ սեպտեմբեր 27-ին Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելու և երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ «Արխի Լաբ» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելու հնարավորությունից, ինչի վերաբերյալ վերջինս 19.10.2020թ. գրությամբ տեղեկացրել է Պատվիրատուին:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Արխի լաբ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ

հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.12.2020թ. թիվ 26/26-1/18230-2020 գրությամբ «Արխի լաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**